

5.13. Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարումը 2004 թվականին

Բնակչությանը և կոմունալ-կենցաղային կարիքների համար ջերմային էներգիա մատակարարող կազմակերպություններում առկա 233 կաթսայատներից 2004թ. գործել են 11-ը, որից 10-ը՝ ք.Երևանում: Ամփոփ ցուցանիշներում չեն ներառվել ջերմարտադրող այն կազմակերպությունների հաշվետվային տվյալները, որոնց արտադրած ջերմային էներգիան ծախսվել է միայն արտադրական կարիքների համար: 11 կաթսայատների համակարգում գործել են 20 կաթսաներ: Աշխատող կաթսայատների գումարային հզորությունը կազմել է 131 Գկալ/ժ (1 Գկալ=10⁹ կալ): 2004թ. ջեռուցման ժամանակահատվածում բոլոր կաթսայատների կողմից ջերմային էներգիայի արտադրության համար օգտագործվել է 2.0 մլն. խոր. մ գազ, այդ թվում ք.Երևանում՝ 1.8 մլն. խոր. մ:

Գործող ջերմային ցանցերի գումարային երկարությունը (երկխողովակային հաշվարկմամբ) կազմել է 734.8 կմ, որի 59.6%-ը կարիք ունի փոխարինման, 26.9%-ը՝ վերանորոգման: Գոլորշու ցանցերի գումարային երկարությունը կազմել է 48.0 կմ:

2004թ. ընթացքում գործող կաթսայատների կողմից արտադրվել է 396.5 հազ. Գկալ ջերմային էներգիա, որից ք.Երևանում՝ 269.3 հազ. Գկալ: Ջերմային էներգիայի ընդհանուր կորուստները կազմել են 49.7 հազ. Գկալ կամ 12.6%, ք.Երևանում՝ համապատասխանաբար 30.5 հազ. Գկալ և 11.4%:


Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմային էներգիայի քանակը, 2004թ.

	Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմային էներգիան, Գկալ	Փաստացի ստացված ջերմային էներգիայի ընդհանուր ծավալից, %		
		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
Ընդամենը	339023	28.2	12.6	59.2
որից՝ ք.Երևան	238826	6.6	15.0	78.4

Հանրապետության 48 քաղաքներից բնակչությանը ջերմային էներգիա մատակարարվել է Երևան, Գյումրի և Հրազդան քաղաքներում:

Քաղաքային համայնքների բնակչությանը տրված ջերմային էներգիայի քանակը, 2004թ.

(%-ով ընդհանուրից)



2004թ. ընթացքում ջեռուցվել է 592 բազմաբնակարան շենք և 771 բնակելի տուն: Հինգ և ավելի հարկանի ջեռուցված շենքերի քանակը կազմել է բազմաբնակարան շենքերի 25.5%-ը: Ք.Երևանում այդ ցուցանիշը կազմել է 58.1%: Բազմաբնակարան շենքերում

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ջեռուցված բնակելի մակերեսը կազմել է 793.5 հազ. քառ. մ, որից 268.1 հազ. քառ. մ-ը՝ հինգ և ավելի հարկանի շենքերում:

2004թ. հանրապետությունում գործող ջերմարտադրող և ջերմամատակարարող կազմակերպությունների արտադրական կարողությունների միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կազմել է 96.7 մլն. դրամ: Ընդհանուր մուտքերը կազմել են 1508.4 մլն. դրամ, այդ թվում՝ 152.4 մլն. դրամը՝ ՀՀ բյուջեից, 1345.1 մլն. դրամը՝ ջերմային էներգիայի իրացումից, 10.9 մլն. դրամը՝ այլ մուտքեր: Ջերմային էներգիայի իրացումից ստացված մուտքերի 16.6%-ը բնակչությունից է:

Ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 918.5 մլն. դրամ: Ըստ ծախսումների առանձին հոդվածների, ծախսերի պատկերը հետևյալն է. 69.5%-ը նյութական ծախսերն են, 0.6%-ը՝ ոչ նյութական ծառայությունների վճարումները, 18.3%-ը՝ աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները, 4.2%-ը՝ պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները, մնացածն այլ բնույթի ծախսեր են:

Հանրապետությունում ջերմային էներգիայի մատակարարումից տարիների ընթացքում կուտակվել է 12882.0 մլն. դրամի պարտք, որից բնակչությունից՝ 7221.0 մլն. դրամի կամ 56.1%, իսկ 2004թ.՝ 1066.3 մլն. դրամի, որից բնակչությունից՝ 161.8 մլն. դրամի կամ 15.2%:

Տարիների ընթացքում ջերմային էներգիայի մատակարարումից կուտակված պարտքերի 46.3%-ը բաժին է ընկել ք.երևանին: 2004թ. այդ ցուցանիշը կազմել է 62.4%:

Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարումը, 1994-2004թթ.

(հազ. Գկալ)

	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003	2004
Հանրապետությունում սպառողներին բաց թողնված ջերմային էներգիան այդ թվում՝	821.5	1040.0	840.4	965.6	1041.8	794.7	990.3	636.1	443.3	438.8	339.0
բնակչությանը	363.4	577.7	492.4	474.3	574.5	383.8	515.8	303.2	204.3	224.3	95.5
կոմունալ-կենցաղային կարիքների համար	88.5	89.0	43.2	150.9	53.9	54.5	62.7	52.7	60.3	53.9	42.6
արտադրական կարիքների համար	369.6	373.3	304.8	340.4	413.4	356.4	411.8	280.2	178.7	160.6	200.9